Նախագահ
Թոմաս Ս. Մոնսոն



«Ինչպես ես ձեզ սիրեցի»

Տարիներ առաջ Լուիս անունով մի ընկեր պատմեց ինձ իր մեղմ ու քնքուշ մոր մասին: Երբ նա մահացավ, իր որդիներին ու դուստրերին չթողեց ֆինանսական հարստություն, այլ լավ օրինակի, զոհաբերության, հնազանդության ժառանգություն:

Հուղարկավորման խոսնակի ելույթը լսելուց և գերեզման տանող տխուր երթն ավարտելուց հետո մեծ ընտանիքը հավաքվեց իրենց մոր թողած աղքատիկ ունեցվածքի շուրջ: Լուիսն այնտեղ գտավ մի գրություն և բանալի: Գրության մեջ նշված էր. «Անկյունում գտնվող ննջասենյակի իմ պահարանի ներքևի դարակում մի փոքրիկ տուփ կա: Այն պարունակում է իմ սրտի գանձերը: Այս բանալին կբացի այդ տուփը»:

Բոլորը սկսեցին խորհել այն մասին, թե ինչ արժեքավոր բան ուներ իրենց մայրը, որ դրել էր փակի տակ:

Տուփը դուրս բերվեց իր տեղից և զգուշորեն բացվեց բանալիի օգնությամբ: Երբ Լուիսը և մյուսները զննեցին տուփի պարունակությունը, նրանք գտան յուրաքանչյուր երեխայի նկարը, որի վրա գրված էր երեխայի անունը և ծննդյան ամսաթիվը: Ապա Լուիսը հանեց տանը պատրաստված մի բացիկ, որը պատրաստվել էր սիրո տոնի կապակցությամբ: Ճանաչելով իր մանկական ձեռագիրը՝ նա կարդաց բառերը, որոնք գրել էր 60 տարի առաջ. «Թանկագին մայրիկ, ես սիրում եմ քեզ»:

Սրտերը լցվեցին ջերմությամբ, ձայները մեղմացան և աչքերը լցվեցին արցունքով: Մոր գանձը նրա հավերժական ընտանիքն էր: Դրա ուժը բխում էր «Ես սիրում եմ քեզ» բառերից:

Մեր օրերում այդ սիրո կարիքը զգացվում է ոչ միայն տանը: Եվ ինչպես կարող է աշխարհը գտնել այդ ուժի ավելի լավ օրինակ, քան Վերջին Օրերի Սրբերի տներում, ովքեր սերը դարձնում են իրենց ընտանեկան կյանքի սիրտը:

Նրանց, ովքեր ուզում են լինել Փրկիչ Հիսուս Քրիստոսի աշակերտները, Նա տվել է այս խորիմաստ հրահանգը.

«Նոր պատվիրանք եմ տալիս ձեզ, որ իրար սիրեք. ինչպես ես ձեզ սիրեցի, որ դուք էլ իրար սիրեք:

«Սորանով կգիտենան ամենքը թե իմ աշակերտներն եք, եթե իրար վրա սեր ունենաք»:[1]

Եթե ցանկանում ենք պահել իրար սիրելու պատվիրանը, մենք պետք է միմյանց հանդեպ կարեկցանք և հարգանք ունենանք՝ սեր ցուցաբերելով ամենօրյա փոխհարաբերություններում: Սերն առաջարկում է բարի խոսք, համբերատար պատասխան, ինքնազոհ արարք, հասկացող ականջ, ներող սիրտ: Մեր բոլոր հարաբերություններում այս և նմանատիպ արարքներն օգնում են ցույց տալ մեր սրտի սերը:

Նախագահ Գորդոն Բ. Հինքլին (1910–2008) նշել է. «Սերը . . . մի կճուճ ոսկի է, որ գտնվում է ծիածանի վերջնակետում: Թերևս այն գտնվում է ոչ միայն ծիածանի վերջում: Մեր կա նաև սկզբում, և դրանից է բխում այն գեղեցկությունը, որ կամար է կապում

երկնքում փոթորկոտ օրերին: Սերն ապահովությունն է, որի համար երեխաները լալիս են, որին ծարավ են երիտասարդները, ամուսնությունները կապող ուժն է և այն, ինչը թույլ չի տալիս, որ տանը կործանարար բախումներ տեղի ունենան. դա ծերության խաղաղությունն է, հույսի շողը, որ փայլատակում է մահվան շավիղներից: Որքան հարուստ են նրանք, ովքեր վայելում են այն ընտանիքում, ընկերական շրջապատում, եկեղեցում և հարևանության մեջ»:[2]

Սերը ավետարանի հենց էությունն է, մարդկային հոգու ամենաազնվագույն հատկանիշը: Սերը դեղամիջոց է անհանգիստ ընտանիքների, անառողջ հասարակության և ազգերի համար: Սերը ժպիտ է, ողջույն, բարի խոսք և հաճոյախոսություն: Սերը զոհաբերություն է, ծառայություն և անեսապաշտություն:

Ամուսիններ, սիրեք ձեր կանանց: Եղեք նրանց հանդեպ սիրալիր և երախտագետ: Քույրեր, սիրեք ձեր ամուսիններին: Եղեք նրանց հանդեպ հարգալից և քաջալերող:

Ծնողներ, սիրեք ձեր երեխաներին: Աղոթեք նրանց համար, ուսուցանեք նրանց և բերեք նրանց ձեր վկայությունը: Երեխաներ, սիրեք ձեր ծնողներին: Ցուցաբերեք նրանց հանդեպ հարգանք, երախտագիտություն և հնազանդություն:

Առանց Քրիստոսի մաքուր սիրո, ինչպես ասել է Մորմոնը, «[մենք] ոչինչ ենք»:[3] Իմ աղոթքն է, որ մենք կարողանանք հետևել Մորմոնի խորհրդին, «[աղոթելով] Հորը սրտի ողջ կորովով, որ [մենք] կարողանանք լցված լինել այդ սիրով, որը նա շնորհել է բոլոր նրանց, ովքեր նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի ճշմարիտ հետևորդներն են, որ [մենք] կարողանանք դառնալ Աստծո որդիները, որպեսզի երբ նա հայտնվի, մենք լինենք նրա նման»([4]):

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Հովհաննես 13.34-35
2. Gordon B. Hinckley, “And the Greatest of These Is Love,” *Ensign,* Mar. 1984, 3.
3. Մորոնի 7.46, տես նաև հատված 44:
4. Մորոնի 7.48

ՈՒՍՈՒՑՈՒՄ ԱՅՍ ՈՒՂԵՐՁԻՑ

Նախագահ Մոնսոնը մեզ ուսուցանում է ճշմարիտ Քրիստոսանման սեր ցուցաբերելու կարևորությունը հատկապես տանը: Խնդրեք նրանց, ում այցելում եք, հավաքվել ընտանիքով և քննարկել, թե ինչպես նրանք կարող են ավելի շատ սեր ցուցաբերել միմյանց հանդեպ: Դուք կարող եք խրախուսել նրանց ընտրել այս գաղափարներից մեկը և ծրագրել, թե ինչպես կարող են հասնել դրան ընտանիքով: Օրինակ, ընտանիքի անդամները կարող են ամեն շաբաթ գաղտնի պայմանավորվել և ծառայություններ մատուցել ընտանիքի անդամներից մեկին: Դուք կարող եք խրախուսել նրանց հետագայում ուշադրություն դարձնել այն փաստին, թե ինչպես է իրենց նպատակին հասնելու ձգտումը մեծացրել սերը իրենց տանը:

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ

Աղոթելով խաղաղության համար

Սառա Թ.

Իմ ծնողները հաճախ ժողովների էին գնում եկեղեցուց հետո, իսկ ես հոգ էի տանում իմ երեք փոքր եղբայրների համար և օգնում նրանց պատրաստելու կեսօրյա նախաճաշը, չնայած նրանք հաճախ անհամբեր էին լինում և քաղցած: Սովորաբար, երբ նրանք սկսում էին վիճել, ես կարողանում էի արագ հարթել փոքր խնդիրները: Սակայն երբեմն դժվար էր լինում խաղաղություն պահպանելը, երբ կռիվ էր սկսվում այն բանից հետո, երբ ես բանավեճի էի բռնվում նրանց հետ:

Մի օր եղբայրներս դժվարանում էին լեզու գտնել իրար հետ: Եվ ես զգացի, որ խաղաղություն ապահովելու իմ ջանքերն ամեն ինչ ավելի էին բարդացնում, քանի որ ես զայրացած էի: Ուստի, ես ուտելիք պատրաստեցի միայն ինձ համար և լռեցի: Ի վերջո, ես հայտարարեցի. «Ես պատրաստվում եմ աղոթել: Կարո՞ղ ենք մենք մի պահ լռություն ապահովել, խնդրում եմ»: Երբ նրանք կարգի հրավիրեցին իրենց, ես օրինեցի ուտելիքը: Աղոթքի վերջում ես ավելացրի. «Եվ խնդրում եմ, օգնիր մեզ լինելու խաղաղարարներ»:

Սկզբում թվաց, թե նրանք չէին լսում և սկսեցին նորից կռվել: Դա բարկացրեց ինձ, սակայն ես գիտեի, որ պետք է, որքան հնարավոր է, սիրալիր և հանգիստ լինեի, քանի որ հենց նոր աղոթել էի խաղաղության համար: Մեկ րոպե անց ես ինձ շատ հանգիստ զգացի: Ես ուտում էի առանց որևէ բառ ասելու, իսկ տղաներն էլ ի վերջո դադարեցրին

կռիվը: Ես հասկացա, որ իմ զգացած խաղաղությունը հասարակ այդ աղոթքի պատասխանն էր: Ես աղոթեցի խաղաղարար լինելու համար, և իմ Երկնային Հայրն օգնեց ինձ պահպանել խաղաղություն, երբ այնքան մեծ էր գոռալու գայթակղությունը: Ես գիտեմ, որ Նա իսկապես կարող է մեզ խաղաղություն տալ:

Հեղինակն ապրում է Արիզոնայում, ԱՄՆ:

ԵՐԵԽԱՆԵՐ

Իսկական գանձ

Նախագահ Մոնսոնը պատմում է մի մոր մասին, ով ուներ յուրահատուկ գանձերի մի տուփ: Երբ նրա երեխաները տուփը բացեցին, նրանք գտան իրենց իսկ նկարները: Մոր գանձը նրա ընտանիքն էր:

Իսկական գանձը ոսկին կամ զարդերը չեն, այլ մարդիկ, ում դուք սիրում եք: Ո՞ւմ եք դուք սիրում: Նկարեք գանձերի մի տուփ, որի մեջ դրված են նրանց նկարները կամ անունները:

© 2017 Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է ԱՄՆ-ում: Անգլերենի հաստատումը. 6/16: Թարգմանության հաստատումը. 6/16: *First Presidency Message, February 2017*-ի թարգմանությունը: Armenian 97922 201

Քրիստոսի Քավությունը Աստծո սիրո ապացույցն է

Աղոթքով ուսումնասիրեք այս նյութը և ոգեշնչում փնտրեք, թե ինչով կարող եք կիսվել:

Հավատք, Ընտանիք, Սփոփանք

Հասկանալը, որ մեր Երկնային Հայրը տվեց Իր Միածին Որդուն, որպեսզի մենք կարողանանք լինել անմահ և ունենալ հավերժական կյանքի ներուժ, օգնում է մեզ զգալու Աստծո անսահման և անըմբռնելի սերը մեր հանդեպ: Մեր Փրկիչը նույնպես սիրում է մեզ:

«Ո՞վ կբաժանէ մեզ Քրիստոսի սէրիցը. . . .

Որովհետեւ հաստատ գիտեմ, որ ոչ մահ, ոչ կեանք, ոչ հրեշտակներ, ոչ իշխանութիւններ, ոչ զօրութիւններ, ոչ ներկայ բաներ, ոչ գալու բաներ,

Եւ ոչ բարձրութիւն, ոչ խորութիւն, եւ ոչ մէկ ուրիշ ստեղծուած բան կարող է մեզ բաժանել Աստուծոյ սէրիցը՝ որ մեր Տէր Յիսուս Քրիստոսումն է» (Հռովմայեցիս 8.35, 38–39):

Հիսուս Քրիստոսի Քավության մասին Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոնն ասել է. «Գեթսեմանիում Փրկիչի տառապանքը և խաչի վրա Նրա հոգևարքը փրկագնում է մեզ մեղքից՝ բավարարելով մեզ համար արդարադատության պահանջները: Նա կարեկցում, ներում և սրբագործում է նրանց, ովքեր ապաշխարում են: Քավությունը նաև վճարում է արդարադատության մեր պարտքը՝ մեզ բժշկելով և փոխհատուցելով մեր անմեղ կրած տառապանքները: «Քանզի ահա, նա տանում է բոլոր մարդկանց ցավերը, այո, ամեն մի ապրող արարածի ցավերը՝ և տղամարդկանց, և կանանց, և երեխաների, որոնք պատկանում են Ադամի ընտանիքին» (2 Նեփի 9.21, տես նաև Ալմա 7.11–12)»:[1]

Քրիստոսը մեզ «[Իր] ձեռքի մեջ [է] փորագրել» (Եսայիա 49.16): Լինդա Կ. Բըրթընը՝ Սփոփող Միության գերագույն նախագահը, ասել է. «Այդ գերագույն սիրո դրսևորումը պետք է մեզանից յուրաքանչյուրին բերի ծնկների վրա՝ խոնարհ աղոթքով շնորհակալություն հայտնելու մեր Երկնային Հորը մեզ բավականաչափ սիրելու համար, որ ուղարկեց Իր Միածին և կատարյալ Որդուն տառապելու մեր մեղքերի, վշտերի և այն ամենի համար, ինչն անարդար է թվում մեր իսկ անձնական կյանքում»:[2]

Լրացուցիչ սուրբ գրություններ և տեղեկություններ

Հովհաննես 3.16, 2 Նեփի 2.6–7, 9, *reliefsociety.lds.org*

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Դ. Թոդ Քրիստոֆերսոն, «Փրկագնում», *Լիահոնա,* մայիս 2013, 110:
2. Լինդա Կ. Բըրթըն, «Արդյոք Հիսուս Քրիստոսի Քավության հանդեպ հավատը գրվա՞ծ է մեր սրտերում» *Լիահոնա,* նոյ. 2012, 114:

Խորհեք այս մասին

Ինչպե՞ս մենք կարող ենք երախտագիտություն հայտնել Աստծուն և Հիսուս Քրիստոսին՝ մեր Փրկչի Քավության պարգևի համար:

© 2017 Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է ԱՄՆ-ում: Անգլերենի հաստատումը. 6/16: Թարգմանության հաստատումը. 6/16: *Visiting Teaching Message, February 2017*-ի թարգմանությունը: Armenian 97922 000